



ԴՐԱՑ. ԳՐ. ԲԱՄԲՈՒԿՁՅԱՆԻ ԶԵԿՈՒՑՈՒՄԸ ՌՈՒՄԵՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՌԵՍՈՒԲՐԼԻԿԱՅԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻՆ ՄԵԶ

Ծումեն ժողովրդական Ռեսպուբլիկայի Ակադեմիայի բժշկական բաժանմունքի վերջին նստաշրջանի 1954 հունվար 25-ի նիստին մեջ, դոկտ. Գ. Բամբուկձյան, Բովասրաստի «Պրոֆ.-դոկտ. Վիկտոր Պապեց» հաստատության գիտական հետազոտությանց բաժանմունքի տնօրինը, բժշկներու կատարելագործման ու մասնագիտացման հաստատութենեն գեներալ-մայոր պլոտֆ.-դոկտ. Ակադեմիա Հոնկինի հետ միասին գեկուցում մը ներկայացուց հետևյալ խորագույն ռերբերու սպիտակումը արյան գնդիկներու շղախի (փաստա դե հեմատի) դարմանումով:

Այս գեկուցումը կհիմնվի կլինիկային, փորձնական ու լաբորատորիական ուսումնասիրությանց վրա և ոճի գործնական ու ինսական կարևորությունը մը:

Անոր գործնական կարևորությունը ապացուցված ծավալուն և խոր այրվածքներու (Յ-րդ աստիճանի) և սպիտակումի ձգտում չունեցող փրոնիկ կեղերու (ulcère) պարագաներով, որոնք վերոհիշյալ մեթոդներով դարմանված, ապշեցուցիչ հետևանքներ ունեցան թե՛ բուժման արագության և թե՛ գեղագիտական տեսակետով:

Անոր տեսական կարևորությունը կկայանա այն իրողության մեջ, որ հեղինակներուն հետազոտությունները երեան հանեցին միկրոսկոպիական ուսումնասիրություններով, կեղագործման մեջ գտնվող, վերնամաշկային (épithéial) բջիջներու ծագումը, առանց վերնամաշկային մնացովներու հետ-

քի, առանձին կարևորություն ունեցող իրողություն մը, որ ցուց կուտա, թե արյան գնդիկներու շաղախի ազդեցության տակ, պատրաստված Մոսկվայի արյումաբանության (hématologie). Հաստատության ցուց տված մեթոդի համաձայն, բջիջներ կուրանան կենցանի անքաջիշ նյութեն: Այս փորձերը անգամ մը ևս կուգան հաստատելու սովորական գիտնական Օլգա Բորիսովնա Լեպեշինսկայայի այն ըմբռնումը, որ հիմնովին շախադինց հետադեմ վիրխովիզմը:

Ծումեն ժողովրդական Ռեսպուբլիկայի բժշկական բաժանմունքի քարոզուլարությունը հայտնեց իր հավանությունը գործածված տեխնիկական մեթոդներու և ձեռք բերված արդյունքներու մասին, շնորհավորելով ու հորդրիելով զանոնք շարունակելու այս հետազոտությունները:

Միաժամանակ կհանձնարարե գործնական բժշկական մարմնին գործածել հեղինակներուն ցուց տված և ստուգած մեթոդը վերքերու տարբեր պարագաներու մեջ, թե՛ անոնց տարածման և խորության, ինչպես նաև մարմնի վրա տեղափոխվելու մասին, բայց և նկատի ունենալով հիվանդի տարիքը, սեռը, ընդհանուր վիճակը և այլն:

Փորձնական ուսումնասիրությունը կլրացնե կլինիկական մասը:

Այս գործը լուս պիտի տեսնե ընդարձակորեն, լուսանկարներով ու միկրոլուսանկարներով Ակադեմիայի բյուզետենին մեջ:

(«ՆՈՐ ԿՅԱՆՔ», Բովարեստ, 28 փետրվարի 1954 թ.)

ՀՈԳԵՑԱՇ՝ ՆԵՎՈՆԴ ԴՈՒՐՅԱՆ ՄՐԲԱԶԱՆԻ ՍՊԱՆՈՒԹՅԱՆ 20-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻՆ ԱՌԹԻՎ

Հունվարի 24-ին տեղի ունեցավ Դուրյան սրբազնի հիշատակին նվիրված հոգեճաշը՝ Ա. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցվու մեծ սրահին մեջ, ուր, սեղաններում շուրջ կտիրեր համակ պատկառանք և հուզում:

Օրվան նախագահներն էին Տ. Աղան արեգան ու նույն եկեղեցվու հովիվը:

Տիկին Աղամինի Սեպուհյան կատարեց ժողովն հանդիսավոր բացումը և կարդաց տիկին Մեծյանի նամակը՝ Դիտրոխուն: Սեղանապետի պաշտոնը կատարեց պարոն Տիգրան Պագալյան, որ հիշեց սրբազնի սպանության դառն օրերու տափապետները:

Հրավիրվեցավ գաղութիս ականավոր երգի պարոն Մարտիրոս Քյոշեյանը, որ հովիվ ապրումներով ու թրթումն ձարնով երգեց «Միրուն մանուշակն» ու «Հայրիկ», Հայրիկ, բո Հայրենիք» երգելը: Տիկին Սիրանուշ Դավիթյանի կենացակի առողջապահ արտասանեց Դուրյանին նվիրված կտոր մը՝ «Կաղնի մըն էր ան»: Պարոն Պետրոս Հազարապետյան դյուրահաղորդ տճով խոսեցավ Դուրյանի կլանքին ու գործումներին շուրջ, որ այնքան բեղուն դարձած էին: Պարոն ենովը Թորոսյան արտասանեց Միամանթոյի «Խորիմյան Հայրիկը»: Խոսեցավ նաև պարոն Ա. Հովսեփյան՝ Դուրյանիներու տաղան-

դը փառավորելով, ինչպես նաև տիկին Մարտիրոսի Քեշիշյան ու պարոն Ե. Նալբանդյանը նահատակ սրբազնի անձնական հատկանիշներն ի հայտ ենքին, որպես օրինակ ծառայեցնելով: Եղույթ ունեցավ հայր Աղան այն տեսակետին շուրջ, թե մեղավորին կարելի չէ թողովիուն շնորհել, երբ ան զղումի ու ապաշխարության նշաններ ցուց շտալե զատ՝ դեռ կհամառի մեղքի ձամբով ընթանալ: Երաժշտագետ պարոն Խոսրով Համամբյան, Ղևոնդ Դուրյանի ազգական մը, առաջարկեց շանք թափել ու Ազգային երեսփոխանական ժողովին միջոցով հաստատել հիշատակի օր մը Ղամոնդ արքեպիսկոպոս Դուրյանի համար: Հետաքրքիր տրամադրության տակ սեղանապետ պարոն Տ. Պագալյան կարդաց էջմիածնի Վեհափառ Հայրապետ Գեղորգ Զ. Կաթողիկոսին նամակներ, որոնք ուղղված էին Կալիֆորնիա թեմին: Պարոն Գաբրիել Մաճայանի ղեկավարությամբ հունվայս երգեցավ «Էջ Միածինն ի Հօրէ» շարականը, որմե հետո հովիվ Տ. Վրթանես Փափազյանի ուղերձով ու «Պահպանիչով Դուրյանի նվիրված այս հարգանքի ու հոգեճաշի ժողովը փակվեցավ:

(«ԱՐԱԲԵՐ», Նյու-Յորք, 4 մարտի 1954 թ.)

ՓԱՐԻԶԻ ՀԱՅ ՈՒՍԱՆՈՒԱԿԱՆ ՏՈՒՆԸ

Փարիզի դռներեն մեկուն քով միջազգային ուսանողական ոստանին մը մեջ կտորնվի հոյակապ և պատվաբեր հաստատություն մը ողբացաւ Պողոս Նուապար փաշայի հանգուցյալ կողակիցին՝ Մատի Նուապարի անունով, որ կոչովի Հայ ուսանողական տուն: Ուսանողական շենքի մը երեսումը հոս ավելի քան պատվաբեր է և կենդանի կոթող-հուշարձան մը հայ ցեղին:

Երբ պետական մեծ ազգեր, ընդ որս Հարավային և Միջին Ամերիկա և ուրիշներ, հակառակ իրենց հարասության և բազմաթիվ կարելիություններուն և միջիարդատեր բարերարներուն, շունին և մտածած անգամ շեն ունենալ իրենց սեփական ուսանողական տունը, հայերս հպարտ կարող ենք ըլլալ տեսներով հայկական ճարտարապետական ոճով բարձրացած այս տունը, ուր 90 ուսանողներ կրնան բնակի հանդստավետ պայմաններով:

Այս փառավոր կերտվածքը իր գլուխը իրարձրացնե հպարտորեն Միջազգային ու-

տանողական ոստանի մուտքին մոտ հոյանդական, ֆրանսական, ամերիկյան, անգլիական, ֆրանսական զանազան գաղղթավայրերու անունով բարձրացած հսկա շենքերու կարգին:

Այս ոստանին մեջ հետպհնետե պատրաստվող ամենազգի ապագան մեծ մարդոց աշխին պատվաբեր չէ արդյոք Հայ տունի մը գոյությունը, իրենցինին շափ, եթե ոչ ավելի, հանգստի պայմաններով:

1928-ին սկսած է այս տան շինովիունը և ավարտած 1932 թվականին, երբ հազիվ գոյությունը ունիին 2—3 նման հաստատություններ:

Այն ատեն Պողոս փաշա Նուապար ծախսած է ավելի քան երեք միլիոն ֆրանկ:

Չորս հարկ տանի շենքը և 94 ուսանողի բնակարան սենյակներ, մեկ և երկու հոգիի համար:

Այս պահուած վաթսուն ուսանող կապրի հուն:

(«ԱՐԱԲԵՐ», Նյու-Յորք, 11 մարտի 1954 թ.)

ԲՐԱՉԻԼԱՅԱՅ ԹԵՍԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

Հայրապետական պատվիրակ գերազնորհ Տ. Սիրն սրբազն հոր ուղղված նամակով մը, բրագլահայ թեմի Հայրապետական պատվիրակի փոխանորդ արժանապատիվ Տ. Եղնիկ ավագ քահանա Վարդանյան կտեղեկացնե նորին սրբազնության թի՝ 1953 դեկտեմբերի 20-ի կիրակի օրը, ըստ թեմի կառունագրի 16-րդ հոդվածի տրամադրության, տեղի ունեցած է Ներկայացուցչական ժողովին ըստ կանոնագրի դադրած 14 անդամներում տեղ նորերու ընտրությունը:

Քըլեարկությունը անցած է խաղաղ և կանոնավոր: Խակ տարավուրս հունվար 15-ին տեղի ունեցած է Ներկայացուցչական մարմնի անդրանիկ նիստը. վարչության հաշվետվության հետո ձեռնարկված է ըստ օրինի դադրած 4 անդամներու ընտրության և քիններու մեծամասնությամբ ընտրված են՝ տիարք Պետրո Նազարյան, Գարեգին Թուովինկչյան, Ռուբեն Քյուրքջյան և Արքահամ Դավիթյան:

Նորմատիվ վարչությունը գուահրած է իր անդրանիկ ժողովը, որ ճախագահ Տեր հոր տերունական աղոթքեն հետո՝ ձեռնարկված է դիմանի ընտրության և արդյունքը հաղորդած պատվիրակ սրբազն հոր՝ վավերացման իմանդրանիկությունը:



Արդ, ճկատելով, որ ընտրությունները կատարված են բրագլահայ մեր թեմի կանոնադրության օրենքներում համաձայն, օրինավոր և խաղաղ մթնոլորտի մեջ, պատ-

վիրակ սրբազնը վավերացուց կատարված ընտրությունները և կեղոնական վարչության ամբողջական կազմը, հետեւալ կարգով.—

Պարոն Անդրեաս Ջաֆերլան՝ Ա. ատենապետ,

Պարոն Պետրո Նազարյան՝ Բ. ատենապետ,

Պարոն Գարեգին Թյուֆենկչյան՝ Ա. ատենադպիր,

Պարոն Արքահամ Դավիթյան՝ Բ. ատենադպիր,

Պարոն Ռուբեն Քյուրքջյան՝ դանձապահ,

Պարոն Միհրան Բոյաջյան՝ հաշվապահ,

Պարոն Երվանդ Գալեմքերյան՝ խորհրդական:

Վատահան թի նորընտիր վարչությունը փոխանորդ Տ. Եղնիկ ավագ քահանա Վարդանյանի աշալուրջ և խոհեմ առաջնորդությամբ ոչընտանի պիտի խնայե նվիրվելու համար թեմին եկեղեցական և կրթական սրբազն գործին, և իր լավագույնը պիտի ընե ի սեր մեր սիրեցյալ ժողովուրդի հոգեւոր հառաջդիմության, մեր սիրասուն զավակներու ազգային ու կրոնական դաստիարակության, ի փառու Աստուծո և ի պայծառություն Հայաստանյայց Եկեղեցվո, պատվիրակ սրբազն հայրը վավերացուց ընտրությունները, օրինակ Վարչականի անդամները և մեր սիրեցյալ ժողովուրդը, ըուլորին մազթելով Աստուծու սերը, իմաստությունը և օրնությունները:

(«ՀԱՅ ԿԵԴՐՈՂ», Բուենոս-Այրես, № 4, 1954 թ.)

